ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն

ՀՏԴ 94 (479.25)

ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ-ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՎԱՉԵ Ա ՎԱՉՈՒՏՅԱՆԻՆ

Բանալի բառեր. Զաքարյաններ, Զաքարե Բ, Իվանե Ա, կողմնակալություն-փոխարքայություն, իշխանաց-իշխան, Վաչուտյաններ, Վաչե Ա, Մամախաթուն, Քուրդ Ա, Խորիշահ, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Տեղեր, Թեղենյաց վանք, Հաղբատ, Մակարավանք:

Ключевые слова: Закаряны, Закаре Б, Иване А, наместничество, князь князей, Вачутяны, Вече А, Мамахатун, Курд А, Хоришах, Ованаванк, Сагмосаванк, Тегер, Тегеняц ванк, Ахпат, Макараванк.

Key words and expressions: Zakaryans, Zakare B, Ivane A, vicegerency, Prince of princes, Vachoutyans, Vache A, Mamakhatun, Kurd A, Khorishah, Hovhannavank, Saghmosavank, Tegher, Teghenyats, Haghbat, Makaravank.

Հայաստանի ազատագրական պայքարը հայոց և վրաց բանակների ամիրսպասալար Զաքարե Բ-ի և եղբոր՝ Իվանե Ա-ի կողմից, 1190-1200-ական թվականներին դարձել է իրողություն: Վարդան պատմիչը գրել է, որ Զաքարյանները «ի վեցհարիւր քառասուն թուին /1191/ առին երկիրն Շիրակայ, և ի վեցհարիւր քառասուն և հինգ թուին /1196/ առին զԱնբերդ, և վեցհարիւր քառասուն և ութ թուին /1199/ առին զԱնի, և ի վեցհարիւր յիսուն թուին /1201/ առին զԲջնի, և ի վեցհարիւր յիսուն և երկու թուին /1203/ առին զԴուին…»[1]: Այս տարածքներն ավելի էին, քան ժամանակին տիրում էին Հայոց Բագրատունի թագավորները:

Ազատագրված հողերը Զաքարյան եղբայրները կամ անմիջապես, կամ որոշ ժամանակ անց, եթե դրանք հին իշխանական տների չէին պատկանում և նրանցից ժառանգներ չկային, հանձնում էին մարտերում աչքի ընկած և իրենց հավատարմորեն ծառայած զորական-զորավարներին:

Պատմական Այրարատյան նահանգի զգալի մասի ազատագրումից հետո Զաքարյան եղբայրներն սկզբնապես այն ոչ մեկի չեն հանձնել առնվազն մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակի կեսերը: Երկրի վարչական ռեֆորմի շրջանակում նրանք այդ տարածքի վրա հիմնել են

[1] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 138:

Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը և այն հանձնել զորավար Վաչե Ա Վաչուտյանին[2]:

Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը և դրա մաս կազմող Նիգ-Արագածոտնը Վաչուտյաններին հանձնելու թվականը չի հավաստվել մատենագրական և վիմագրական աղբյուրներում:

Հանձնման թվականը ճշտելու համար սկսենք պահպանված վիմագրերից:

1201 թվականը որպես Այրարատյան կողմնակալության-փոխարքայության հիմնադրման տարեթիվ դիտարկվել է 1890 թ-ին «Այրարատ» գրքում Հայր Ղևոնդ Ալիշանի հրատարակած հետևյալ արձանագրությունից. «Ի ժամանակի տէրութեան Իւանէի եւ Շահինշահի, վերակացութեան գաւառիս Վաչէի մ[ե]նք ամէն Ամբերդ տուաք զԲողիոցն առին կէսն Տեղերո…»[3]: Կարապետ Կոստանյանցն իր հրատարակած վիմագրերի դիվանում այդ արձանագրությունը դրել է 1201 թ–ի տակ[4]: Սակայն արձանագրության անունների բանաձևից հետևում է, որ այն փորագրված է Զաքարե Բ-ի մահվանից /1213/ հետո, երբ արդեն իշխանության գլուխ էին նրա եղբայր Իվանե Ա-ն և որդին՝ Շահնշահ Ա-ն: Այսինքն արձանագրությունը չէր կարող գրվել 1213 թ-ից վաղ: Այնուամենայնիվ սխալ թվագրումը երբեմն պատճառ է դարձել Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը այդ թվականին ստեղծելու և Վաչե Ա-ին հանձնելու իրողությամբ:

Ուշիի վանական համալիրի պեղումների ժամանակ բացված մի արձանագրություն շրջանառության մեջ են դրել Ֆաինա Բաբայանը և Արամ

---

[2] **Տ.Պետրոսյանց,** Վաչուտյաններ, Ե., 2001, 363 էջ: **Տ.Պետրոսյանց**, Հայկական իշխանական զինանշանները, Ե., 2005 /Վաչուտյանների զինանշանները, էջ 54-58/: **Տ.Պետրոսյանց**, Վաչուտյաններ /էջ 284/, Վաչե Ա /էջ 283/, Հայաստանի Հանրագիտարան, հ. 11. Ե., 1985: **Տ.Պետրոսյանց**, Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը, Լրաբեր հաս. գիտ., 1981, թիվ 1, էջ 82-84: **Տ.Պետրոսյանց**, Վաչուտյան իշխանական տան տոհմածառը, Բանբեր Երևանի համալսարան, 1981, թիվ 3, էջ 130-147: **Տ.Պետրոսյանց**, Սաղմոսավանք, «Էջմիածին», 1981, Դ, էջ 55-58: **Տ.Պետրոսյանց**, Մռավյան գյուղի Աստվածածին եկեղեցին և արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 3, էջ 289-294: **Տ.Պետրոսյանց**, Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն, Պատմա-բանասիրական հանդես, 1982, թիվ 1, էջ 121-129: **Տ.Պետրոսյանց**, Քուրդ Վաչուտյանի իշխանանիստ Վարդենիս գյուղը, «Սովետական մանկավարժ», 1987, 6, էջ 53-56:

[3] **Հ.Ղևոնդ Ալիշան**, Այրարատ, 1890, էջ 156:

[4] **Կ.Կոստանյանց,** Վիմական տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 142:

Քալանթարյանը: Ահա այդ արձանագրության նրանց վերականգնումը. «Ես Վաչէ իշխանաց իշխ[*ան, որդի Սարգսի, կո*]ղմ/ն/ակալ աշխարհիս [*հր*]ամանաւ Ի[*ւանէի եւ Զաքարէի եկ*]եղեցիս զարդար[*եցի զս(ուրբ) նշ*]խարքս արծաթով, արարի այլ ար[դիւն]ս…»[5]: Քառակուսի փակագծերում թեք տառաշարքը բացակայող հատվածներն են: «Հրամանաւ» բառերից հետո եղած «Իւանէի եւ Զաքարէի» բառավերականգնման մասին: Զաքարե Բ-ի կենդանության օրոք, մինչև 1213 թվականը, իր արքայատանը ենթակա Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության տարածքում հնարավոր չէր առաջինը գրել Իվանե Ա-ի անունը: Վերականգնումը ճիշտ չէ: Բացի այդ անհասկանալի է նվիրատվությունը կատարելու պատճառը (անկախ թագավոր-սյուզերենների հրամանից): Համոզված կարող ենք փաստել, որ պահպանված «Ի» տառից հետո պետք է վերականգնել հետևյալ տեքստը. «հրամանավ Ի[**ւանէի եւ Շահնշահի շինեցի** եկ]եղեցիս», ինչի դեպքում նաև մեծածախս նվիրատվության պատճառը պարզ կլինի: Անբերդից հայտնի արձանագրությունում առկա է «…ի ժամանակի տէրութեան Իւանէի և Շահնշահի, վերակացութեան զաւառիս Վաչէի…» բանաձևը: Ուշիի արձանագրությունը ևս պիտի դիտվի Անբերդի արձանագրությանը համաժամանակյա, այսինքն 1213 թ-ին կամ ավելի ուշ փորագրված:

Վաչուտյան տան ներկայացուցիչներին վերաբերող առաջին երկու թվագրված արձանագրությունները վերաբերում են միևնույն 1211 թ-ին:

Դրանցից մեկը՝ «Ի ՈԿ /1211/ թու/իս/, ես՝ Վաչէ, ծառա Զաքարիաի, որդի Սարգսի, շինեցի զխորանս եւ ետու զիմ ոսկետուփ զաւետարանս եւ զս/ուր/բ նշանս և զգործքս մեծ ծախիւք ի ս/ուր/բ Ա/ստուա/ծածինս»[6] պատկանում է իշխանական տան հիմնադիր Վաչե Ա Վաչուտյանին և փորագրված է Սանահինի վանքի մեծ գավթի ներսում, հարավային պատի արևելյան կողմում, իսկ երկրորդը՝ «Թվ/ին/ ՈԿ /1211/: Ես՝ Մամախաթունս, ամուսին Վաչէի, դուստր ..., արարի քշոցանի արծաթի եւ այլ արդիւնս եւ ետու ս/ուր/բ ուխտս Թեղենեաց եւ սպասաւորք սորա հաստատեցին»[7] պատկանում է Վաչե Ա Վաչուտիանի կնոջը՝ Մամախաթուն իշխանուհուն, և փորագրված է Նիգ գավառի մշակութային կենտրոններից մեկի՝ Թեղենյաց վանքի հիմնական գավթի ներսում, հյուսիսային որմնակամարի ձախ մասում:

---

[5] **Ֆ.Բաբայան, Ա.Քալանթարյան**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 2001, թիվ 2, էջ 170:

[6] **Կ.Ղաֆադարյան**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները: Ե., 1975, էջ 29:

[7] Մեր հավաքածոյից:

Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության տարածքում Վաչուտյաններին վերաբերող արձանագրությունները վերաբերում են 1213 թ-ին, կա նաև 1213 թ-ով թվագրվող մեկ թեական հիշատակագրություն:

Քննենք դրանք հերթով:

ա/ 1213 թ-ին կամ դրան անմիջապես հաջորդող տարում ավարտվել է Ուշիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը: Այն կառուցող Վաչէ Ա իշխանաց իշխանը արձանագրել է. «Ես՝ Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի կաղմ/ն/ակալ աշխարհիս, հրամանաւ Իւանէի եւ Շահնշահի շինեցի եկեղէցիս, զարդարեցի զսուրբ նշխարքս արծաթով…»[8]:

բ/ Տեղերի Սբ.Աստվածածին եկեղեցու բարավորին ՈԿԲ /1213/ թ-ին Վաչէ Ա Վաչուտյանի կողմից արձանագրվել է «Ի ՈԿԲ թվին … իւրում Վաչէի, բարեպաշտ իշխանի, որ էր կարգել հրամանաւ Զաքարէի վերակացու գաւառի, … յիշատակ նոցա մատուցանե պատարագ»[9]:

գ/ 1213 թ-ին ավարտվել է Արայիի իջևանատան կառուցումը: 19-րդ դարի առաջին կեսին Հովհաննես Շահխաթունեանցը[10], 20-րդ դարի սկզբին Թորոս Թորամանյանը[11] տեսել և արձանագրել են պահպանված արձանագրության ՈԿԲ /1213/ թվականը:

դ/ 1213 թ-ին Վաչէ Ա-ն, Պռոշյաններին ենթակա տարածքում գտնվող Կեչառիսի վանքում արձանագրել է. «ՈԿԲ /1213/ թու/իս/: Կաման Ա/ստուծո/յ: Ես[a] Վաչէ, որդի Սարգսի՝ որդո Վաչուտի եւ ամուսին իմ Մամախաթուն, եւ որդիք իմ Քուրդս եւ Վաչուտ, միաբանեցաք ի ս/ուր/բ ուխտս Կէչառուս եւ տուաք ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ այգի …»[12]:

Անդրադառնանք նաև թեական 1213 թ-ով թվագրված մեկ հիշատակագրության:

Այն շրջանառության մեջ է դրել ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը: Հիշատակարանը գրել է Գրիգոր վարդապետ գրիչը: Ահա այն ամբողջությամբ. «Ի թվականիս ՉՃԿԲ /1213/: Ես՝ Գրիգոր պիտականուն վարդապետս, որ սպասավորեցի շինութեան վանուցս՝ եկեղեցիացս և ժամատանս, հրամանաւ և ծախիւք քրիստոսասէր մեծ իշխանին Վաչէի, և

---

[8] **Ֆ.Բաբայան, Ա.Քալանթարյան**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, էջ 171:

[9] **Ս.Կարապետյան**, Տեղերի վանքը, Վարձք, 2013, թիվ 10, էջ 18-19:

[10] **Յով.Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, Վաղարշապատ, 1842, էջ 169-170:

[11] **Թ.Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Ե., 1948, էջ 119:

[12] **Գարեգին կաթողիկոս Յովսէփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ: Բ հրատարակութիւն, 1969, Անթիլիաս, Լիբանան, էջ 314:

կանգնեցի զխաչս ի հանգստարանի իմոյ, քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ յաստեացս պարտեացս զայս գիր թողի, և ոք ընթեռնու իմովս բանիւ առ Աստուած կարդասցէ հանապազ խոստովանութեամբ, զոր գիրս ընդ մտացս և բանս ընդ հոգւոյս զողորմածն Աստուած միշտ թախանձեսցէ որք ընթեռնուք, աղոթիւք զիս յիշեցէք»[13]:

Հիշատակարանում գրված է, որ խոսքը վերաբերում է 1213 թ-ին իրականացված շինարարական աշխատանքներին և, որ դրանք, կատարվել են Վաչե Ա Վաչուտյանի կողմից: Հիշատակարանում գրված է եկեղեցիների և ժամատուն-գավթի կառուցման մասին, որոնց իրականացման գործը սպասավորել է Գրիգոր վարդապետը և որոնք կառուցվել են «հրամանաւ և ծախիւք … մեծ իշխանին Վաչէի»: Գրիգոր վարդապետի հիշատակագրությունը թվագրված է ՉՃԿԲ /6x100+60+2=662+551=1213/ թվականով: Ա.Մաթևոսյանը նշել է, որ ձեռագիրը գրվել է Սաղմոսավանքում և վերաբերում է Սաղմոսավանքին:

Հիշյալ 1213 թ-ին ավարտվել են Աշտարակի շրջանում Տեղերի, Ուշիի Կաթողիկե եկեղեցիների շինարարական աշխատանքները, սկսվել ու շարունակվում էր Սաղմոսավանքի, Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցիների շինարարությունը, որոնցից առաջինի կառուցումը ավարտվել է 1215 թ-ին, երկրորդինը՝ 1217 թ-ին: Ապարանի տարածաշրջանի Եղիպատրուշ գյուղի Կաթողիկե եկեղեցու կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ, ամենայն հավանականությամբ կառուցումն ավարտվել է 1220-ական թվականների սկզբին[14]: Նույն տարածաշրջանի Աստվածընկալի Կաթողիկե եկեղեցու կառուցումն ավարտվել է 1244 թ-ին: Հիշյալ եկեղեցիների գավիթների կառուցումն ավարտվել է Տեղերինը՝ 1218 թ-ին, Սաղմոսավանքինը՝ 1220-ական թվականների երկրորդ կեսինկ, Հովհաննավանքինը՝ 1251 թ-ին, Աստվածընկալինը՝ 1250-ական թվականների սկզբին, Ուշիինը՝ 1264 թ-ին:

Այդ դեպքում հիշատակագրության մեջ որ եկեղեցու և գավթի շինարարության մասին է խոսք գնում, որոնց կառուցումն սկսել է Վաչե Ա Վաչուտյանը ու դրանց շինարարությունն ավարտվել է արդեն 1213 թ-ին:

1213 թ-ին Սաղմոսավանքի համալիրի առաջին Սուրբ Սիոն Կաթողիկե եկեղեցին դեռևս չէր կառուցվել /շինարարությունն ավարտվել է 1215 թ-ին/: Այդ դեպքում ինչպես կարող էր Գրիգոր վարդապետը սպասավորել եկեղեցու և ժամատան շինարարությանը հիմնարկեքից մինչև

---

[13] **Ա.Մաթևոսյան,** ԺԳ դարի հիշատակարաններ, Ե., 1984, էջ 82:

[14] **Տ.Պետրոսյանց**, Մռավյան գյուղի Աստվածածին եկեղեցին և արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 3, էջ 289-290:

դրանց ավարտը: Սուրբ Սիոնից հետո Կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմից սկսվել է գավթի կառուցումը, որը ամենայն հավանականությամբ ավարտվել է 1220-1225 թվականների ընթացքում: Սա հավանական է դարձնում Գրիգոր վարդապետի տեղեկությունը, որ ինքը սպասավորել է եկեղեցիների և գավթի կատուցմանը: Բայց հակասում է հիշատակարանի մեջ նշված 1213 թվականին: Հայտնի է, որ 1232/35 թվականների միջև Վաչե Ա իշխանաց-իշխանը կնքել է մահկանացուն: Դրա հաստատումն է Կարբիի խաչքարի 1235 թ-ի արձանագրությունը, որ փորագրվել է Քուրդ Ա Վաչուտյանի հրամանով և որով նա հաստատել է իր գահակալ դառնալը[15]: Սակայն դրա մասին չի գրում Գրիգոր վարդապետը, այսինքն նա չի ապրել մինչև Վաչե Ա-ի մահը, չի տեսել այդ, այլապես դրա մասին անպատճառ կգրեր: Ստացվում է, որ Գրիգոր վարդապետը տեսել է համալիրի Կաթողիկե եկեղեցու և գավթի կառուցման ավարտը, որ եղած պիտի լինի ամենաուշը 1225 թ-ին, բայց չի ապրել մինչև Վաչե Ա-ի մահը, որ պիտի տեղի ունեցած լինի ամենաուշը մինչև 1235 թ-ը: Փաստորեն հիշատակագրությունը կարող է գրված լինել 1220-1235 թվականների միջև: Վերոհիշյալից ելնելով առաջարկում ենք Գրիգոր վարդապետի հիշատակագրությունը սրբագրել. այդտեղ տասնավորի Կ-ն /60/ պետք է սրբագրել Հ-ով /70/, որից հետո կստանանք ՋՃՀԲ /672+551=1223/ թվականը: Այստեղից հետևում է, որ Գրիգոր վարդապետը սպասավորել է Վաչե Ա-ի կողմից սկսված Կաթողիկե եկեղեցու և գավթի շինարարական աշխատանքներին, որոնց ավարտից հետո 1223 թ-ին գրել է հիշատակագրությունը:

Հիշատակագրության 1213 թվականը սրբագրելով 1223 թ-ի՝ միաժամանակ հաստատում ենք, որ և Կաթողիկե եկեղեցին, և գավթը կառուցվել են Վաչե Ա-ի օրոք:

Սաղմոսավանքի գավթում 1241 թ-ին փորագրված արձանագրությամբ Քուրդ Ա-ն հաստատել է, որ համալիրի այդ կառույցները իրականացվել են հոր՝ Վաչե Ա-ի կողմից[16]: Մենք 1970-ական թվականների կեսերին մեծ դժվարությամբ կարդացինք Քուրդ Ա-ի հիշյալ արձանագրության առաջին երկու տողերը, շարունակությունը, որտեղ նշված է, որ եկեղեցին ու գավիթը կառուցել է հայրը՝ Վաչե Ա-ն, չկարողացանք կարդալ և ճշտել Քուրդ Ա-ի գիրը, որով սխալ եզրակացությամբ գավիթի կառուցող համարեցինք Վաչե Ա-ի թոռ Վաչե Բ-ին: Վիմագրագետ Աշոտ Մանուչարյանի վերծանությամբ Քուրդ Ա-ի հիշյալ

[15] **Տ.Պետրոսյանց**, Վաչուտյաններ, էջ 54:
[16] **Կ.Ղաֆադարյան**, Սանահին: Էջ 29:

արձանագրությունը ընթերցվել և դրվել է շրջանառության մեջ և մենք ընդունելով մեր սխալը ընդունում ենք, որ գավիթը ևս կառուցել է Վաչե Ա-ն:

Գրիգոր վարդապետի հիշատակագրության թվականի ուղղումից հետո այն դադարում է 1213 թ-ի սկզբնաղբյուր լինել:

Վերը բերված 1213 թ-ի մյուս սկզբնաղբյուրներից հետևում է, որ Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության տարածքում ամենավաղը Մամախաթուն իշխանուհու Թեղենյաց վանքում թողած 1211 թ-ի նվիրագիրն է:

Սրան շատ մոտ են 1213 թվականով թվագրվող Ուշիի Կաթողիկե եկեղեցու /կասկածելի/, Տեղերի Սբ.Աստվածածին Կաթողիկե եկեղեցու, Արայիի իջևանատան շինարարական արձանագրությունները:

Քննարկենք Սանահինի 1211 թ-ի շինարարական արձանագրությունը: Վաչե Ա-ն կառուցել է համալիրի մեծ գավիթը /«շինեցի զխորանս»/: Այն կից է Աստվածածին եկեղեցու արևմտյան և Ամենափրկիչ եկեղեցու գավթի հյուսիսային պատերին: Շինությունը հարավից հյուսիս ձգված ուղղանկյուն կառույց է: Արևելքից արևմուտք դասավորված սյունաշարքերով բաժանված է երեք մասերի, որոնցից յուրաքանչյուրն առանձին ծածկված է երկթեք տանիքով: Հայ ճարտարապետության մեծ երախտավոր Կարո Ղաֆադարյանը գրել է, որ Սանահինի այս գավիթը իր տիպով «եզակի օրինակ է հայկական գավիթների մեջ և, ամենայն հավանականությամբ, կապվում է աշխարհիկ պալատական սյունազարդ դահլիճների հետ, որոնց օրինակները մեզ չեն հասել»[17]: Գավիթը կառուցողական տեսակետից աշխատատար և ժամանակ պահանջող կառույց է եղել: Եթե նկատի ունենանք, որ 13-րդ դարին հատուկ քառասյուն գավիթները կառուցվում էին 6-7 տարում, ապա այս շինության համար, եթե նկատի ունենանք անգամ, որ նրա երկու պատերն արդեն առկա էին, կառուցման համար դարձյալ նվազագույնը 5-6 տարի կպահանջվեր: Եվ եթե հետհաշվարկի սկզբունքով 1211 թվականից հանենք նվազագույն 5 տարի, որ պահանջվել է շինարարության համար, կստանանք 1206 թվականը, երբ սկսվել է Վաչեաշեն գավթի կառուցումը: Այս թվականի ճշտումը խիստ կարևոր է: Մենք կարծում ենք, որ Սանահինի մեծ գավթի կառուցումը պետք է դիտվի Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը Վաչե Ա-ին հանձնելու ժամանակը և անվերապահորեն պատասխան Զաքարյաններին՝ Վաչե Ա-ի նկատմամբ ցուցաբերած մեծ վստահության՝ Նիգ-Արագածոտնը

[17] **Աշոտ Մանուչարյան**, Քուրդ Ա Վաչուտյանի երկու արձանագրության վերծանություն, տես ysu.am/files /03A_Manucharyan.pdf:

նրան սեփականություն հանձնելու, Այրարատյան կողմնակալ-փոխարքա նշանակելու, իշխանաց իշխանի տիտղոս շնորհելու համար:

1213 թ-ին Նիգ-Արագածոտնում Տեղերի, Ուշիի Կաթողիկե եկեղեցիների, Արայիի իջևանատան շինարարական աշխատանքների ավարտը փաստում են, որ դրանք կատարելու համար նախ հարկավոր էր այդ տարածքը ստանալ և միայն դրանից հետո այդ հողերի վրա շինարարական աշխատանքներ կատարել: Եթե այդ աշխատանքները կատարելու համար հաշվարկենք առավելագույնը 7 տարի ու հետադարձ հաշվարկով 1213 թ-ից հանենք այդքան տարի՝ կստանանք 1206 թվականը:

Վերոհիշյալից ելնելով կարող ենք փաստել, որ Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը ստեղծվել և Վաչե Ա-ին հանձնվել է 1206 թվականին:

Այդ թվականներից ավելի վաղ Այրարատյան կողմնակալության-փոխարքայության ստեղծումը բացառվում է համապատասխան նյութերի բացակայության պատճառով:

Т. Петросянц

ПЕРЕДАЧА АЙРАРАТСКОГО НАМЕСТНИЧЕСТВА ВАЧЕ А ВАЧУТЯН

Резюме

В начале XIII века Закаряны освобожденную Айраратскую область превратили в наместничество и передали одному из своих полководцев сыну Саргиса Вече А Вачутяну, награждая его званием «князь князей». В статье рассматривается период передачи Вачутянам Айраратского наместничества.

T. Petrosyants

The transfer of Ayrarat vicegerency to Vache A. Vachoutyan

Summary

The article discusses the period of transfer of Ayrarat vicegerency to Vache A. Vachoutyan. In the beginning of 13th century in 1206 Zakaryans changed the liberated Ayrarat province into vicegerency and passed it to one of their generals, the son of Sargis- Vache A Vachoutyan. They awarded him the title of Prince of princes.